

**ՓՈՒՆԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ**  
**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**  
**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ**  
**ՄԻՋԵՎ**

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (այսուհետ՝ ՄՍՀԿ),  
և  
Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գրասենյակը (այսուհետ՝ ՀՀ  
ՄՍԳ)  
այսուհետ միասին՝ Կողմեր,  
դիտարկելով մտավոր սեփականության (այսուհետ՝ ՄՍ) ոլորտը որպես նորարարության,  
սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման կարևոր շարժիչ ուժ,  
գիտակցելով ՄՍ ոլորտում իրականացվող համագործակցության կարևորությունը,  
հաշվի առնելով Հայաստանում ՄՍ ոլորտի զարգացմանն ուղղված Հայաստանի  
Հանրապետության կառավարության ջանքերը,  
որոշել են ստորագրել մտավոր սեփականության ոլորտում համագործակցության վերաբերյալ  
սույն Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Փոխըմբռնման հուշագիր):

**I. ԱՌԱՐԿԱՆ**

Սույն Փոխըմբռնման հուշագրով սահմանվում է համագործակցությունը Կողմերի միջև՝  
նպատակ ունենալով՝

- ապահովել Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության ազգային  
համակարգի հետագա զարգացումը,
- ապահովել մտավոր սեփականության և տեխնոլոգիաների առևտրայնացման  
ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացումը,
- ապահովել բուհերի և գիտահետազոտական հաստատությունների կարողությունների  
հզորացումը ՄՍ կրթության և առևտրայնացման ոլորտներում,
- խրախուսել ՄՍ նոր գիտելիքների տարածումը և առևտրայնացումը,
- բարձրացնել մտավոր սեփականության ոլորտի վերաբերյալ իրազեկվածության  
մակարդակը և հարգանք ձևավորել ՄՍ իրավունքների նկատմամբ:

## II. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը համատեղ աշխատանքներ են իրականացնելու սույն Փոխըմբռնման հուշագրի նպատակին հասնելու համար: Համագործակցության յուրաքանչյուր ծրագիր կիրականացվի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ հաշվի առնելով Կողմերի համար սահմանված բյուջետային և կադրային սահմանափակումները: Գործողությունների ձևաչափը և այլ մանրամասները կհամակարգվեն Կողմերի միջև՝ հաշվի առնելով ԿՈՎԻՂ-19-ի համաճարակային դրությունը և ճանապարհորդական սահմանափակումները:

Մասնավորապես, կողմերը պարտավորվում են՝

- նպաստել մտավոր սեփականության համակարգի զարգացմանը Հայաստանում.
- խրախուսել համագործակցությունը կարողությունների զարգացման և Հայաստանի կարիքներին հարմարեցված ՄՍՀԿ ակադեմիայի կամ ՄՍ այլ ուսումնական հաստատության ստեղծման տարբեր ծրագրերի իրականացման հնարավորության շուրջ.
- նպաստել տեխնոլոգիաների և նորարարությունների աջակցման կենտրոնների ազգային ցանցի զարգացմանը.
- խրախուսել ՄՍ ազգային ռազմավարության իրականացումը, որը ներկայումս մշակվում է ՄՍՀԿ-ի աջակցությամբ.
- կազմակերպել ՄՍ Աիրազելվածության և կարողությունների բարձրացմանն ուղղված համատեղ միջոցառումներ,
- անհրաժեշտության դեպքում տրամադրել տեխնիկական աջակցություն ՄՍ ազգային համակարգի, քաղաքականության և կրթական ծրագրերի զարգացման գործում.
- նպաստել ՄՍՀԿ-ի կողմից կառավարվող միջազգային պայմանագրերի իրականացմանը.
- անհրաժեշտության դեպքում անցկացնել հանդիպումներ և խորհրդակցություններ՝ քննարկելու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերը:

Կողմերը կարող են հաստատել համագործակցության այլ ձևեր սույն Փոխըմբռնման հուշագրի նպատակներին հասնելու համար:

### III. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման օրվանից և ուժի մեջ է մտնում այդ օրվանից սկսած՝ 4 տարի ժամկետով: Այն կարող է երկարաձգվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ մյուս Կողմին այդ մասին երկու ամիս առաջ գրավոր ծանուցելով:


Սույն Փոխըմբռնման հուշագիրը կարող է փոփոխվել ցանկացած ժամանակ Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

Ցանկացած վեճ, որը կարող է ծագել Կողմերի միջև սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում, պետք է լուծվի խաղաղ ճանապարհով՝ Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

Սույն Փոխըմբռնման հուշագրում ոչինչ չպետք է համարվի կամ մեկնաբանվի որպես՝ միջազգային կազմակերպության և Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված գործակալության՝ ՄՍՀԿ-ին տրամադրված որևէ արտոնությունից կամ անձեռնմխելիությունից հրաժարում:

Ստորագրված է 2022 թվականի հուլիսի 16-ին ժևնևում երկու բևօրինակով՝ յուրաքանչյուրը հայերեն և անգլերեն հավասարազոր տեքստերով: Սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթների երկու լեզուներով մեկնաբանման անհամապատասխանության առկայության դեպքում գերակայում է անգլերեն լեզվով տարբերակը:

Մտավոր սեփականության  
համաշխարհային կազմակերպության  
կողմից՝



Դարեն Թանգ

Գլխավոր տնօրեն

Հայաստանի Հանրապետության մտավոր  
սեփականության գրասենյակի կողմից՝



Զրիստինե Համբարյան

Ղեկավար